

ԱՐՑԱԽԻ ՊԱՅՔԱՐԸ

Գրեց ՅՈՎԻԿ ԷՕՐՏԵՔԵԱՆ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին ու անոր շուրջը տեղի ունեցած իրադարձութիւնները, Ստեփանակերտի ու Երևանի ծովածաւալ ցոյցերը հայ ազատագրական պայքարի ու հայկական պահանջատիրութեան նորագոյն ու փառասլան ձևերը կը կազմեն: Հողահաւաքի ու ազգահաւաքի հոյակապ այս խոյանքը՝ ի Արցախ, ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, կը կարօտի գիտական լուրջ ուսումնասիրութեան:

Ի՞նչ տեղի ունեցաւ եւ ինչպէ՛ս տեղի ունեցաւ: Արտօլեան քաղաքէն սկիզբ առնող ու բոլորովին այլ նպատակ հետապնդող բողոքի աննշան ցոյց մը ինչպէ՞ս վերածուեցաւ ողջ ազգի մը պոռթկումին, որ ստիպեց Ս. Միութեան գերագոյն մարմիններուն՝ կուսակցական թէ պետական, հաշուի նստելու անոր հետ: Բարձրաստիճան ղեկավարներու խոստումներո՞ւն հիման վրայ, վերակառուցումը փորձաքարի ենթարկել ուզող ուժերու դրդումով, հայրենի մտաւորականութեան նախաձեռնութեամբ, թէ՞ այս բոլորին ու այլ հանգամանքներու մէկտեղումով:


Ղարաբաղեան շարժումին յաջողութեան ու մանաւանդ անոր գոյատևումին առարկայական թէ ենթակայական պատճառներուն մէջ կարևոր ազդակներ էին Հայաստանի մէջ դաշնակցումը երկու ուժերու՝ հակադեմոկրատականներու ու միջին եւ երիտասարդ սերունդին պատկանող մտաւորականութեան: Այս դաշնակցումը իր մէջ ուժ գտաւ օգտուելով բազմաթիւ երևուցիկներէ, որոնցմէ մեր կարծիքով գլխաւորներն էին Մոսկուայէն տեղացող քննադատութիւնները հայրենի ղեկավարութեան հասցէին, նոյն այդ քննադատութեանց հետ միասին հանդէս եկող կեդրոնական կառավարութեան ապիկար կարգադրութիւնները, ինչպէս անեւ հայրենի իրականութեան մէջ այլեւս անշնչելի դարձած քաղաքական ու տնտեսական մթնոլորտը, ընկերային անարդարութիւնները եւ բոլոր այն երևուցիկները, որոնք կոչուեցան «լճացման տարիների երևուցիկներ»:

Ղարաբաղի ու Հայաստանի մէջ տեղի ունեցածը սակայն, մեր կարծիքով, ամէն բանէ առաջ 70 տարուան ընթացքին տարբեր տարադրումներ ստացած սոցիալիզմին ձախողութիւնն էր ազգային բնազդին չափումին ու ձեւումին մէջ: Ազգի մը ծինեբէն եկող այդ բնազդը վերակառուցում կոչուող պատեհութենէն օգտուելով դուրս ժայթքեցաւ կրկին՝ իր գոյութեան իսկ սպառնալիք դարձած անարդարութիւն մը սրբազրելու մտասեւեռումով: Ահա ճիշդ այս ելակէտէն ալ աւելորդ կը դառնան այլեւս շարժումը ճիշդ կամ սխալ, վաղաժամ կամ ժամանակավրէպ տեսնելու շատերու անհեթեթ մարզանքները: Ժողովրդական բոլոր շարժումներն ալ ճիշդ են, եթէ անոնք կը բղխին ազնիւի, արդարի ու գեղեցիկի ակունքներէն:

Ազգահաւաքի ու հողահաւաքի համազգային այս պայքարին մէջ երկու բացասական երևուցիկ պէտք է արձանագրել սակայն. ա - հայրենի ժողովուրդ-պետականութիւն խզումը (սկզբնական շրջանին), բ - երկու խմբաւորումներու գոյութիւնը, որոնցմէ առաջինները ազգային զգացումներու օգտագործումով, յախուռն ու անկշռադատ ելուցիկներով պատեհապաշտական նպատակներ հետապնդեցին, իսկ երկրորդները՝ իրենց «լոյսալուծում» ու «հաւատարմութեամբ» խոչընդոտեցին, հակադրուեցան նոյնիսկ մեր ժողովուրդին արդար ու սահմանադրական պայքարին: Արդար ու սահմանադրական այդ պայքարը ազաւաղելու, հակօրինականութեան կնիքը տալու համար խորհրդային որոշ շրջանակներ փնտռեցին օտար տարրեր, մամուլ ու ձայնասփիւռներ, իսկ «Զուարթնոց» օղակայանի դէպքով փորձուեցաւ շարժումը ամբողջապէս անգամահատել:



Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ատրպէյճանական ՍՍՀի կազմէն Հայկական ՍՍՀ կազմին մէջ մտցնելու կապակցութեամբ ՍՍՀՄ Գերագոյն Խորհուրդի, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ղեկուսատաների Մարզային Սովետի, Հայկական ՍՍՀ Գերագոյն Խորհուրդի համապատասխան որոշումներուն պարզ ընթերցումն իսկ կ'ապացուցանէ ՍՍՀՄ սահմանադրութեան, աւելի ճիշդը՝ Ստալինի ու Պրեժնեւի սահմանադրութեան անհեթեթութիւնը: Եւ բնաւ պատահական չէ, որ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրէն Յարութիւնեան ՍՄԿԿ 19րդ կուսակցական համաժողովին հինգ հազար պատուիրակներու առջեւ պահանջեց, որ «...կուսահամաժողովը յանձնարարէր ձեռնամուխ լինել ՍՍՀՄ սահմանադրութեան նոր խմբադրութեան նախապատրաստումը...»: Եզրակացութիւնը պարզ է, սահմանադրական պայքարի գլխաւոր արգելակը նոյնինքն այդ սահմանադրութիւնն է: Զիրար ջրող ու հակասող յօդուածները (կարծես յետին նպատակներով ղետեղուած) անխուսափելիօրէն հայրենի ժողովուրդը կը դնեն պայքարի նոր ուղիի վրայ: Յաւալին այն էր, որ ՍՍՀՄ Գերագոյն Խորհուրդին 18 Յուլիսի որոշումը լենինեան ազգային քաղաքականութենէն ճառելով հանդերձ, կ'ոտնահարէր նոյնինքն լենինեան ազգային քաղաքականութեան ոգին մարմնաւորող ՍՍՀՄ սահմանադրութեան ազգային ինքնորոշման 70րդ յօդուածը: Չափազանցութիւն չէր ըլլար եթէ ըսէինք, թէ ՍՍՀՄ Գերագոյն Խորհուրդին որոշումը կասկածի տակ կ'առնէ վերակառուցման քաղաքականութեան յատկապէս ազգային հարցերուն անդրադարձող կողմը, ինչպէս նաեւ ազգային հարցերը հին ոճով լուծող իր այս որոշումով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչութիւնը կը դնէ փորձանաւոր ժամանակներու դէմ յանդիման:



Արցախական աշխարհի դաւակներուն, հայրենիքի ու սփիւռքի զանդուածներուն գլխաւոր յաղթանակը ազգային-քաղաքական նոր դարձումն էր: Ինքնաճանաչումի ու ինքնահաստատման այս օրերուն ազգային միասնականութեան գաղափարին գործնականացումը լուսագոյնս պէտք է օգտագործել բոնրոց-

ԱՐՅԱԽԻ ՊԱՅԲԱՐԸ

(Շար. Բ. Էջէն)

քանալու ու պահանջատիրական մեր պայքարը շարունակելու
միշտ հիմնահարցէն չչեղելու վճռականութեամբ: Ղարաբաղ
եան վերջին իրադարձութիւնները յուսահատութեան արամայ
րութիւններ պէտք չէ բերեն մեզի, որովհետեւ, այս՛, Սուս
յիթի սուղ գնով իսկ, հարցը հասցուցած ենք տեղ մը, ուր
կամ կանուխ անիկա անպայման իր արդար լուծումը պիտի
գտնէ:

Արցախի պայքարը նոր հանդրուան մը կը թեւակոխ
այժմ, ու մենք՝ սփիւռքահայերս, Արցախի ու հայրենի ժող
վուրդին հետ միասին պիտի կրկնենք՝

Միացու՛ւմ, Միացու՛ւմ, Միացու՛ւմ:

Երեսն-Պէյրուք